

ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության
և Սիրիայի Արաբական Հանրապետության գյուղատնտեսության և
գյուղատնտեսական բարեփոխումների նախարարության միջև
գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության
նախարարությունը և Սիրիայի Արաբական Հանրապետության
գյուղատնտեսության և գյուղատնտեսական բարեփոխումների
նախարարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր)
առաջնորդվելով հավասարության և երկու երկրների ազգային
շահերի նկատմամբ փոխադարձ շահավետության սկզբունքներով,
ցանկանալով ամրապնդել և զարգացնել երկկողմ
համագործակցություն գյուղատնտեսության բնագավառում,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն գյուղատնտեսության
բնագավառում տեխնիկական և առևտրատնտեսական
համագործակցության զարգացմանը, կաջակցեն երկու երկրների
պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև կապերի
հաստատմանը և կցուցաբերեն անհրաժեշտ աջակցություն
համագործակցության մասնակիցներին՝ իրենց համագործակցության
բոլոր մակարդակներում:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը համագործակցությունը կիրականացնեն
հետևյալ եղանակներով՝

- երկկողմանի գյուղատնտեսական առևտրի զարգացում,
- գյուղատնտեսական բնագավառի տեղեկատվության փոխանակում,
- գիտաշխատողների, մասնագետների և ստաժորների փոխանակում,
- սեմինարների և դասընթացների համատեղ կազմակերպում,
- համատեղ ձեռնարկությունների ստեղծման խրախուսում:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի Հոդված 1-ի իրագործման նպատակով,
Պայմանավորվող կողմերը նախապատվություն կտան
համագործակցությանը հետևյալ բնագավառներում՝

- գյուղատնտեսական մշակաբույսերի, պտղատու ծառերի (ներառյալ
տոհմական և ցեղական արտադրության տեսակների և ազնվական

տեսակների), ինչպես նաև երկու երկրներում օգտագործվող կարևորագույն սերմերի, տնկիների և սերմերի արտադրության տեխնոլոգիայի բնագավառում տեղեկատվություն և փորձի փոխանակում,

- բուսական արտադրության ուսումնասիրությունների բնագավառում փորձի փոխանակում,
- բույսերի հիվանդությունների դեմ պայքարի, ինչպես նաև երկու երկրներ ներմուծվող գյուղատնտեսական մթերքների նկատմամբ կիրառվող օրենսդրության և ստուգման կանոնների մասին տեղեկատվության փոխանակում,
- գյուղատնտեսական մեխանիզացիայի տեխնոլոգիաների բնագավառում փորձի փոխանակում,
- ոռոգման բնագավառում ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման և ջրերի օգտագործման մասին փորձի փոխանակում,
- անասնապահության, անասնապահական արտադրանքի ուսումնասիրությունների և կերարտադրության բնագավառում տեղեկատվության և փորձի փոխանակում,
- հիվանդությունների տարածման կանխարգելման մասին երկու երկրներում հրատարակվող տեղեկագրերի և ձեռնարկների փոխանակում,
- անասնապահական ստուգումների, միջոցառումների, համաճարակների դեմ պայքարի, ինչպես նաև պատվաստուկների, անասնապահական դեղերի արտադրության և լաբորատոր ախտորոշումների բնագավառում համագործակցություն և փորձի փոխանակում,
- գյուղատնտեսական հողերի օգտագործման, այն դասակարգելու, բարենորոգելու և պարարտացնելու բնագավառում փորձի փոխանակում,
- գյուղատնտեսական, բուսական և կենդանական ծագման արտադրանքի վաճառքի, արտադրական տեխնոլոգիաների բնագավառում փորձի փոխանակում:

Հոդված 4

Համագործակցության ընթացքում ձեռք բերված արդյունքների փոխանակումը մեկ այլ երրորդ կողմի պետք է իրականացվի Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ:

Ձեռք բերված արդյունքների փոխանցումը պետք է իրականացվի համաձայն Պայմանավորվող կողմերի համապատասխան օրենքների և կարգավորումների և միջազգային համաձայնագրերով սահմանված իրենց պարտավորությունների:

Հոդված 5

Պայմանավորվող Կողմերը կստեղծեն Համատեղ աշխատանքային խումբ, որը կմշակի գյուղատնտեսության բնագավառում

համագործակցության ծրագրերն ու եղանակները և կիստևի նրանց իրականացմանը: Նիստերը հաջորդաբար կգումարվեն Հայաստանի Հանրապետությունում և Սիրիայի Արաբական Հանրապետությունում:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պետք է հոգա Համատեղ աշխատանքային խմբում իր ներկայացուցիչների, ինչպես նաև տեխնիկական աշխատողների և մասնագետների գործուղումների հետ կապված ծախսերը:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա ուժի մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Պայմանավորվող կողմերի միմյանց ծանուցման օրվանից:

Սույն Համաձայնագիրը կգործի հինգ տարի ժամկետով: Այն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարիների համար, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Պայմանավորվող կողմին գրավոր չի հայտնում այն վերափոխելու և դադարեցնելու իր մտադրության մասին:

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխություններն ու լրացումները ձևակերպվում են առանձին Արձանագրություններով, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

Հոդված 7

Համաձայնագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտում Համաձայնագրով նախատեսված այն աշխատանքների կամ ծառայությունների իրականացմանը, որոնք սկսվել, բայց չեն ավարտվել Համաձայնագրի գործողության դադարեցման պահին:

Ստորագրվել է Դամասկոս քաղաքում 2000 թվականի սեպտեմբերի 20-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Տեքստի մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների առաջացման դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 31-ից: